Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
դեկտեմբերի 28-ի N 2339 - Լ որոշման

Կ Ա Ր Գ

ԱՆԿԱՆԽԻԿ ԵՂԱՆԱԿՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻՑ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻՆ ՀԵՏՎՃԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են անկանխիկ գնումներից և վճարումների գործարքներից կենսաթոշակառուներին հետվճար տրամադրելու (նշանակելու և վճարելու) հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում կիրառվող հասկացություններն ունեն սույն որոշման N 1 հավելվածով սահմանված իմաստները:

II. ՀԵՏՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄԸ

3. Հետվճարը հաշվարկվում է միջոցառմամբ սահմանված չափով:

4. Հետվճարը վճարվում է յուրաքանչյուր ամիս՝ մինչև տվյալ ամսվա 25-ը: Հետվճարը վճարվում է անկանխիկ եղանակով՝ կենսաթոշակառուի բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

5. Հետվճարները հաշվարկվում և վճարվում են 2024 թվականի հունվար ամսից մինչև 2024 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ՝ տվյալ ամսվան նախորդող ամսում կատարած անկանխիկ գնումների և վճարումների գործարքների արդյունքներով:

6. Նախորդող ամսում կատարած անկանխիկ գնումների և վճարումների գործարքների ծավալները հաշվարկում են բանկերը՝ հաշվարկից բացառելով այն գործարքները, որոնց գծով չի ձևավորվում հետվճար:

7. Բանկը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված միջոցներով (Սի-Բի-Էյ-Նեթ ֆինանսական տեղեկատվության փոխանակման համակարգ) ծառայությանն է տրամադրում հետվճարի շրջանակներում կենսաթոշակառուների կողմից տվյալ ամսում կատարված անկանխիկ գնումների և վճարումների գործարքների ծավալների վերաբերյալ սույն կարգի N 1 ձևով սահմանված տվյալները՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը:

8. Ծառայությունը ստացված տվյալները համադրում է համապատասխան տեղեկատվական շտեմարաններում առկա տվյալների հետ և կազմում է վճարման ցուցակ:

9. Վճարման ցուցակ չեն ներառվում համադրման օրվա դրությամբ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցված շահառուների տվյալները:

10. Բանկը գումարը վերադարձնում է միայն բանկային հաշիվը փակված լինելու դեպքում: Այս դեպքում մինչև հետվճարի գումարը փոխանցելու ամսվա վերջին աշխատանքային օրը հետվճարը բանկը վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ միաժամանակ ծառայությանը տրամադրելով սույն կարգի N 2 ձևով սահմանված տվյալները:

11. Սույն կարգի 10-րդ կետով սահմանված կարգով վերադարձված հետվճարը վճարվում է հաջորդ ամսվա հետվճարի գումարի հետ:

12. Հետվճարի վճարելուն առնչվող հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կարգով և այլ նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև սոցիալական ապահովության հաշվի պայմանագրերով, իսկ սոցիալական ապահովության հաշվի սպասարկմանն առնչվող հարաբերությունները՝ կենսաթոշակառուի ու բանկի միջև կնքված՝ բանկային հաշվի պայմանագրով:

Ձև N 1

Ց Ա Ն Կ

ԱՆԿԱՆԽԻԿ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԲԱՆԿԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ

1. Բանկի անվանումը (ծածկագիրը).

2. Շահառուի անունը, ազգանունը, առկայության դեպքում՝ հայրանունը.

3. Շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.

4. Պարբերական դրամական վճարի գործի համարը և հետվճարի շրջանակներում անկանխիկ գնումների և վճարումների գործարքների ծավալը դրամով:

Ձև N 2

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎԵՐԱԴԱՐՁՎԱԾ՝ ՀԵՏՎՃԱՐԻ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԲԱՆԿԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ

1. Բանկի անվանումը (ծածկագիրը).

2. Շահառուի անունը, ազգանունը, առկայության դեպքում՝ հայրանունը.

3. Շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.

4. Վերադարձման ենթակա հետվճարի չափը.

5. Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փաստացի փոխանցված (վերադարձված)՝ հետվճարի չափը.

6. Գանձապետական հաշիվը, որին փոխանցվել (վերադարձվել) է հետվճարը.

7. Հետվճարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձնելու օրը, ամիսը, տարեթիվը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ